

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/8**  
**8 օգոստոսի 2017թ.**

Քննարկվեց «ԳԱԼԻՏԻ ԹՐԵՅԴ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.05.2017թ. N 005134 որոշման դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.03.2017թ. N1110595 հանձնարարագրի համաձայն «ԳԱԼԻՏԻ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում, կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 26.04.2017թ. N1110595 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 04.05.2017թ. կայացվել է N 005134 որոշումը՝ «ԳԱԼԻՏԻ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի գործունեությունը 5 օրով կասեցնելու մասին:

Նշվեց նաև, որ «ԳԱԼԻՏԻ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից 16.05.2017թ. հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 26.04.2017թ. N1110595 ակտը վերացնելու պահանջի մասին:

ՀՀ վարչական դատարանի 25.05.2017թ. թիվ ՎԴ/4381/05/17 որոշման համաձայն՝ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հրավիրվել է նախնական դատական նիստ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ «ԳԱԼԻՏԻ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից գանգատարկվող՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 04.05.2017թ. N005134 որոշման կայացման համար հիմք հանդիսացած Ակտը վիճարկվում է դատական կարգով, հետևապես՝ անհնարին է սույն վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի

ընդունումը մինչև վարչական դատավարության կարգով քննվող թիվ ՎԴ/4381/05/17 գործով վերջնական դատական ակտի կայացնելը: Հաշվի առնելով նշված հանգամանքը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ԳԱԼԻՏԻ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

«ԳԱԼԻՏԻ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ